

մայրաքաղաքը, կամ այսպէս ըսելով գլխաւոր քաղաքը, չինուած մի լուսն ծայրին, որ կը տիրէ մեծ Զապ գետին աջ եզերքին: Ամէտիան որ փոքրիկ քաղաք մ'է մի ցեղի, կը ծառայէ զօրանոցի (ի հարկէ օսմանեան), որ կը հսկէ չըջապատի Քիւրդերուն: Նա նոյնպէս կ'ըսէ. «Երբ միւսիւլմանները տիրեցին Միջագետքին, նեղութիւն յանձն չաւին գրաւելու ձուլամերիկի լուսնային չըջանը, որ կը գտնուի Վանի և Ուրմիա լճի միջև, ուր Նեստորականները ունէին իրենց բերդերը ու կարենոր հաստատութիւնները: Իրապէս անկախ, Քըխտունեաները իրենց կը համարէին յարձակման աննկթարկելի. բայց 1843ին, չըջապատի միւսիւլման Քիւրդերը քաջակրուած թիւրք իշխանութիւններէ, յարձակեցան Նեստորական գիւղերի վրայ, բոլոր պաշտպանուողները սրէ անցուցին, կիները գերի աարուեցան, և տղաները թլփատելով բռնի մահմտականացուցին» (երես 354):

Դարձեալ. «Այն լուսնադաշտերը ուր Քիւրդերը խմբուած են հոծ ցեղերով, մասնաւորապէս մեծ Զապի աւազանը, անոնք կը կազմեն մի ազգութիւն, և բաւական ուժեղ. այնպէս որ հանդէպ թիւրքերի և պարսիկների, մի զատ սկստութիւն կազմելու փառասիրութիւնն ունէին: Այն խառնութիւնները որոնք տեղի ունեցան այս վերջին կէս դարին, և մասնաւորապէս ուստական վերջին արշաւանքէն սկսեալ, անոնց մեծ մասը խկապէս նպատակ ունէին քաղաքական ազատութիւն ձեռք բերելու: Նոյն իսկ փորձեցին կազմելու «Քիւրդական լիգա» (երես 342):

Բաֆֆին իր «Տաճկահայք»ի մէջ կ'ըսէ. Պետիր-Խան բէգը կոտորեց Մար—Շիմնի ասորիներէն մինչև տասը հազար (երես 53): Այսպէս Պոտանի Քիւրդերը կը կամենային միանալ իսկական Քիւրդիտանի հետ, գուցէ կործանելով ու ջնջելով Ասորիտանը: Բայց որքան որ թիւրքական հին բէթիմը երբեմն թէ՛ ստիպուած և երբեմն կամաւ թույլ տուաւ Քիւրդերուն, առանց ունէ քաղաքակրթական ուրիշ պայմանների հիմնելու աւազակային իշխանութիւն, բայց շատ անգամ ալ արշաւեց